Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01-2012
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

2012 թվականի ապրիլի 23-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց, 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էր «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հիմնադիր և միակ բաժնետեր Վարդան Սիրմաքեսը (11670 ձայնի իրավունքով)։

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 11670) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու։

Ժողովը նախագահում էր Վ. Սիրմաքեսը, իսկ ժողովի քարտուղարն էր Ա. Սելլեֆյանը։

ՕՐԱԿԱՐԳ

2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2011 թվականի շահույթը բաշխելու հարցը։

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը.

ՈՐՈՇԵՑ

<u>Երկրորդ հարցով</u> (զեկուցող՝ Ա. Սելլեֆյան)՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2011 թվականի ֆինանսական տարվա 1,198,883,000 (մեկ միլիարդ մեկ հարյուր իննսունինը միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամ զուտ շահույթից 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ դարձնելով այն 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, իսկ մնացած 698,883,000 (վեց հարյուր իննսունինը միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ, որի արդյունքում Բանկի չբաշխված շահույթի մեծությունը կկազմի 1,871,310,000 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասունմեկ միլիոն երեք հարյուր տաս հազար) ՀՀ դրամ։

Որոշումն ընդունվեց միաձայն։
Որոշումն ուժի մեջ է մտնում 2012թ. ապրիլի 23-ից։

Նիստին այլ հարցեր չքննարկվեցին։

Սույն արձանագրությունը կազմված է 23.04.2012թ.-ին, հայերեն լեզվով, երկու օրինակից, բաղկացած է 2 (երկու) էջից։

Ժողովի նախագահ՝ <u>ստորագրություն</u> Վ. Սիրմաքես

Ժողովի քարտուղար՝ <u>ստորագրություն</u> Ա. Սելլեֆյան